ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ն-15

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
19 հոկտեմբեր 2018թ.

№ Ն-15(Հ-15)2018

Ուժի մեջ է մինչև 30 օգոստոս 2022թ.

Սույն վկայականը հավաստում է, որ ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» № 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի № 898-Ա հրաման)՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ № 027/Т-068) № 1-Բ Հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

ՀՀ, ք. Երևան, Աբովյան 68

Էլ. հասցե; ecocentr@sci.am, info@cens.am Հեռ./ֆաքս: (+374 10) 57-29-24

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիայի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգեր

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի № 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին»ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 005/2011)
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի № 798 որոշմամբ հաստատված «Խաղալիքների անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 008/2011)
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի № 799 որոշմամբ հաստատված «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 009/2011)
4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)
5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 023/2011)
6. .Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 883 որոշմամբ հաստատված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 024/2011)
7. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի № 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 034/2013)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝
Կ.Տ.

(ստորագրությունը)